
II

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ

ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ժողովրդական բանավոր երգիծանքը դարերի խորքից է գալիս: Այդ երգիծանքի մաս կազմող մանրապատումներն ու զվարճախոսությունները¹, անեկդոտները², տարբեր տարածաշրջաններում հայոց մեջ տարատեսակ անվանումներ են ունեցել՝ առակ, բեթ (բեյթ), գափ (գյափ), շուխ, շուլուխ, հանաք, պընկըլ-պունգըլ, մասալ, գա-րափ(ֆ)աթ և այլն: Գիտական ու գրական շրջանակներում նս դրանք զանազան ան-վանումներով են հանդես եկել՝ առասպել, զվարճալիք, խնդուկ, մանրադէպ, մանրա-վէպ, սրախոսություն-սրամտություն, ժողովրդական երգիծական մանրապատում, զվարճապատում, զվարճախոսություն, անեկդոտ (վերջինս XIX դ. երկրորդ կեսից սկսեց շրջանառվել նաև ժողովրդի մեջ) և այլն:

Իսկ ինչպե՞ս են դրանք բնութագրվում ժողովրդի կողմից և տարբեր բառարաննե-րում, լեզվաբանների, մշակութաբանների, բանագետների, գրականագետների ու-սումնասիրություններում, գրողների հրատարակած գրքերում ու բանահավաքների ժողովածուներում ի՞նչ հատկանիշներով են ներկայացված:

Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» առակ նշանակում է նաև «փոքր պատմություն՝ ուր կայ մի բարեխրատ օրինակ: ... Երբ առակը պարզ չէ և նմա-նութիւնը դժուարըմբռնելի, այն ժամանակ նա դառնում է „առեղծուած, հանելուկ: Իսկ երբ ամփօփուած է մի կարճ ձևի մէջ, համարում է „առած, ասացուած,»³:

Հայոց լեզվի բարբառային բառարանում առակ-ը բացատրված է նաև որպէս հայ-հոյանք, նախատական խոսք, հանդիմանություն⁴: Իսկ Ստ. Մալխասյանցի բառա-

¹ Ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճապատումներն ու զվար-ճախոսությունները տարանջատել ենք՝ մանրապատում-զվարճապատումի համար հիմք ընդունելով նրա սյուժետային՝ պատումային հատկանիշը, զվարճախոսության համար՝ անսյուժե՝ անպատում բնույթը:

² XIX դ. երկրորդ կեսից շրջանառության մեջ մտած անեկդոտ եզրույթը ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների օտարալեզու անվանումն է:

³ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 249:

⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, էջ 97:

բանում՝ նաև՝ առած, հասարակաց գրուցուածք, համառոտ պատմուածք, դժուարիմաց այլաբանութիւն և այլն⁵:

Չնայած «Հայոց լեզվի բարբառային բառարանում» նշվում է, որ բեթ-ը՝ առակ և հանելուկ նշանակությամբ, առկա է միայն Մոկսի տարածաշրջանում⁶, Ս. Ավագյանի գրքում Մոկսից բացի, նշվում է նաև Վասպուրական աշխարհի Արձակ գավառը, որտեղ ժողովուրդը զվարճապատումներին տվել է բեթ (բէթ) անվանումը⁷, իսկ բեթ պիրել-ը նշանակել է զվարճալի պատմություն, զվարճապատում, առակ-զվարճապատում պատմել⁸:

Ի դեպ, մինչև XX դ. 60-ական թվականները ժողովուրդը կիրառել է «առակ» («առակ ասել») եզրույթը՝ նկատի ունենալով թե՛ բուն առակը, թե՛ առած-ասացվածքը, թե՛ զվարճապատում-զվարճախոսությունը, իսկ դրանց հաճախակի գործածողին ու հանպատրաստից նորերը ստեղծողին որոշ տարածքներում (ինչպես, օրինակ՝ Ախալցխայում⁹ և Լոռիում¹⁰) անվանել է նաև առակախոս:

Նշենք նաև, որ XX դարասկզբին իր հրատարակած հայ ու արևելքի զվարճախոսներին (Հոբոս, Խոջա Նասրեդին) նվիրված գրքերը Եր. Լալայանը ևս անվանել է առակներ¹¹, իսկ XX դ. երկրորդ կեսին Ստ. Մալխասյանցն իր գրքում տարանջատել է առակն ու անեկդոտը¹²:

Պատմական Արցախի Հաղորդի և Մարտակերտի շրջաններում զվարճապատումներն ու զվարճախոսությունները տարբեր անվանումներով են հանդես գալիս՝ շուլուխ, հանաք, գափ (գյափ), զարափատ և այլն, իսկ զվարճախոսներին, բացառությամբ Վանք գյուղի, անվանում են զարափատչի, հանաքչի, շուլուխչի, գյափչի: Վանքում զվարճախոսներին «գյափի-գյուփի» մարդիկ են ասում¹³:

⁵ Ստ. Մալխասյան. Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 2010, էջ 214:

⁶ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 176:

⁷ Ս. Ավագյան. Արձակ. - Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Երևան, 1978, էջ 129:

⁸ Նույն տեղում, էջ 130:

⁹ Ախալցխայում հայտնի է եղել առակախոս Սարգիս Մալխասյանցը՝ լեզվաբան, բառարանագիր Ստ. Մալխասյանցի հայրը [տե՛ս Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով): Գրի առավ Ստ. Մալխասյանցը, Երևան, 1958, էջ 7]:

¹⁰ Լոռու մարզի Շամուտ գյուղից Չոբանանց Արուսիկի համբավը, իբրև հայտնի առակախոս, տարածված է եղել նաև Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի տարածաշրջաններում (Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու, այսուհետև՝ ԱՍՇՀ):

¹¹ Հոբոս. Ժողովրդական առակներ, հավաքեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1903, Ե. Լալայան. Ժողովրդական առակներ. Մոլլա Նասր - էդ - դին, Թիֆլիս, 1904:

¹² Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով):

¹³ Սվ. Վարդանյան. Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից. - ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, - 8, էջ 92, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 231:

Լոռիում, այդ թվում՝ Նոյեմբերյանի տարածաշրջանում (գ. Կոթի), զվարճախոսին նաև գափի մարդ են ասում, իսկ գափ անել նշանակում է կատակել, զվարճալի բաներ պատմել¹⁴:

Ըստ «Հայոց լեզվի բարբառային բառարանի»՝ զարափաթ/զառաֆաթ եզրույթը՝ կատակ, հանաք իմաստով, գործածվել է ոչ միայն Ղարաբաղում, այլև՝ Շամախիում, Վանում, Կարինում, Սասունում, Արարատյան դաշտավայրում¹⁵: Այդ եզրույթը կիրառելի է եղել նաև Ագուլիսում¹⁶, իսկ շուլուխ(դ)-ը, հանաք-ը՝ կատակ իմաստով, Արարատյան դաշտում, Ղարաբաղում, Շամախիում¹⁷ և Լոռիում (վերջինիս վկայությունը հայտնի ասացվածքներն են¹⁸, ինչպես նաև հրատարակված զվարճապատում-զվարճախոսությունների գրքերի վերնագրերը¹⁹):

Սակայն շուլուխ, հանաք (կատակ) եզրույթները չեն ընդգրկում անսպասելի ծիծաղ առաջացնելու հանգամանքը, դրանք առավելապես սովորական կատակել, կատակ անելն են մատնանշում:

Չվարճապատումներին տրվող ժողովրդական պրնկըլ-պունգըլ եզրույթը, բացի պրնգըլ-բունգըլ-բունկըլի հանելուկ իմաստից (Ղարաբաղ, Լոռի)²⁰, բունգն գրությամբ Նոր Ջուղայում հեքիաթ իմաստն է ունեցել²¹: Ժողովրդական արտասանությամբ այդ բոլոր ձևերը, ըստ Աճառյանի, առաջացել են բանկն-ից, որը նշանակել է առասպել, հեքիաթ, մուսալ, իսկ բանկնարկել՝ առասպելաբանել²²:

Երբեմն էլ եթե խոսքն անպարկեշտ՝ ոչ վայելուչ անեկդոտի մասին է, օգտագործվում է բամբառանք եզրույթը (ըստ Վիլյամ Սարոյանի՝ գոեհիկ՝ բամբառակ²³): Թե՛ Մալխասյանցի բառարանում²⁴, թե՛ «Հայոց լեզվի բարբառային բառարանում»²⁵ բամբառակ-բամբարակը, բացի կատակաբան, զվարճաբան, հանաքչի, անպարկեշտ, հասարակության մեջ չասվելիք, հասկացություններից, նշանակել է նաև մեծախոս,

¹⁴ ԱՄՇՀ:

¹⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 402:

¹⁶ Ագուլիսի բարբառի մասունքներ, աշխատասիրությամբ Ա. Այվազյանի, Երևան, 2012, էջ 159:

¹⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 289:

¹⁸ «Շուլուխի կեսը ճիշտ ա: Դուր խոսքը շուլուխով են ասում» (ԱՄՇՀ):

¹⁹ Ա. Ս ա ք ա ն յ ա ն. Լոռվա հանաքներ, Երևան, 1977, Խ. Գ յ ու լ ն ա գ ա ռ յ ա ն. Մեր գյուղի հանաքները, Երևան, 1991:

²⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 222:

²¹ Նույն տեղում:

²² Հ. Ս ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Ա, էջ 407-408:

²³ Մ. Հ ա թ ու թ յ ու ն յ ա ն. 8 օր Սարոյանի հետ. - «Սովետական գրականություն», 1970, -8, էջ 83:

²⁴ Մ տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 322:

²⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 156:

պոռոտախոտ, թույլ՝ անճարակ՝ բանուզործ չունեցող մարդ: Փաստենք նաև, որ Ակնումառկուիլ նշանակել է իրար հետ անճոռնի կատակներ անել²⁶:

Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի և գրող, հրապարակախոս Մ. Թադիսյանի օրոք, ընդհուպ մինչև XX դ. երկրորդ կեսը, դեռևս լիովին տարբերակված չէին առակ, առած-ասացվածք, առասպել, ժողովրդական մանրապատում-գվարճախոսություն (անեկդոտ) եզրույթները: Այսպես, Թադիսյանը Կալկաթայում հրատարակված պարսկական երգիծապատումների թարգմանությունների ժողովածուն՝ հայկական 19 նմուշների հավելվածով, վերնագրել է «Զուարճախօսք առակք Պարսից»²⁷, իսկ Մ. Զոհրապյանը գերմանական, ֆրանսիական, անգլիական, հնդկական, ռուսական, հունական անեկդոտների թարգմանությունները և մի քանի հայկական նմուշներ պարունակող գիրքն անվանել է «Վէպք զուարճալի անձից, յորս պարունակին իրատական և իմաստալից ասացուածք»²⁸:

Խ. Աբովյանը «Պարսպ վախտի խաղալիք»-ում «Ասացվածք բնահայտք ինքնահարմար հորինված»²⁹ վերնագրում ընդգրկել է չափածոյի վերածած լոռեցիների և Մոլլա Մասրադնի 4-ական անեկդոտ-երգիծապատում և 7 առակ, նույն կերպ էլ ասացվածք³⁰-ի ներքո՝ 5 առակատիպ նմուշ: Մեկ այլ դեպքում չափածոյի վերածած 10 առակները նա անվանում է առասպելք³¹, իսկ «Զվարճալի ու կարճ պատմությունք» մանրապատումների ժողովածուում, որը հիմնականում այլ ժողովուրդներից թարգմանած կամ փոխադրած անեկդոտներ են, նշվում է նաև՝ սրամիտ առածք (մասալեք)³² եզրույթները:

Խ. Աբովյանը, հետագայում նաև մեր բանահավաքչության ու ժողովրդագիտության երախտավոր Գ. Սրվանձոյանը նմանատիպ հորինվածքները անվանում են առասպել, այսինքն՝ սուտ կամ ստերի սուտ:

Սրվանձոյանը «Մանանա» ժողովածուի «Հանելուկներ, առակներ և նորելուկներ» բաժնում (հիշենք՝ գիրքը տպագրվել է 1876 թ.) խոսում է նաև իր հավաքած նյութերի, մասնավորապես հանելուկների ու առակների մասին: Առակներին անդրադառնալիս՝ նա իր գրառած առակ-գվարճապատումների տեղադրումը «Մանանա»

²⁶ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Ա, էջ 250:

²⁷ Զուարճախօսք առակք Պարսից: Թարգմանեալ հանդերձ հաւելուածովք, Կալկաթայ, 1846:

²⁸ Վէպք զուարճալի անձից, յորս պարունակին իրատական և իմաստալից ասացուածք: Ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց աշխատասիրութեամբ Մովսիսի Զօհրապեանց Արցախեցոյ, ի Տիփիս, 1858:

²⁹ Խ. Աբովյան. Երկեր, Երևան, 1984, էջ 295:

³⁰ Նույն տեղում, էջ 337:

³¹ Նույն տեղում, էջ 357:

³² Նույն տեղում, էջ 403:

ժողովածուում ծավալի պատճառով անհնար է համարում: «...բայց տեսնելով, որ բավական ստվար եղավ Մանանաս, կպահեմ այլ պատեհության, – գրում է Սրվանձտյանցը՝ կոնկրետացնելով նաև առակների մի մասի տեղավայրը, – հանդերձ կաճեցի ծռերու «պակասամտաց» վրա շինված առասպելներով»³³:

Ինչպես գիտենք, Խորենացին դեռևս V դարում էր նմանատիպ հորինվածքներն առասպել անվանում, այսինքն՝ սուտ կամ ստերի սուտ³⁴:

Ի դեպ, դեռևս XI–XII դարերում «առասպել» նշանակել է նաև առակ, իսկ «առասպելախաւսք»՝ առակախոս: Իր «Առակագրություն» ուսումնասիրության մեջ Ս. Աբեղյանը գրում է. «Հայերեն առասպել բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ... հնում հալածված են եղել ինչպես գուսանները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն՝ առակախոսները»³⁵:

Սրվանձտյանցի անտիպ ձեռագրերում, բացի առասպել, առակ, եզրույթներից, հանդիպում ենք նաև ժողովրդական երգիծապատումներին տրվող մեկ այլ անվանման՝ «գուարձալիք», որին հետևում է նշումը՝ ծիծաղաշարժ ձեռնարկում³⁶: Դրանք շատախցիներից, կաճեթցիներից և Վասպուրական աշխարհի այլ վայրերից գրառած համառոտ սյուժեով տասը նմուշներ են³⁷, որոնցից «Ամբողջ գիւղի մը իմին տոււած»³⁸ զվարճապատումը, կաճեթցիների՝ կաղամբի թթու դնելու մասին է. «Կաճեցիք կաղամբի թթու բռնելուն համար խնայելով աղն, խորհեցան, որ Ախթամարայ ծովուն մէջ, որուն ջուրն սաստիկ աղի է, բռնել թթուն: Եւ բոլոր գիւղի կաղամբներ մանրելով՝ ծովը լեցուցին...»³⁹:

Ս. Հայկունին ևս իր գրառած թե՛ բուն առարկաները, թե՛ անեկդոտներն ընդգրկել է «Ժողովրդական առակներ» գրքում⁴⁰: Նշենք նաև, որ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) պահպանվող Ս. Հայկունու անտիպ առակներն ու անեկդոտները ևս «Ժողովրդական առակներ» խորագիրն են կրում: Գրառումների նշումներում երբեմն երգիծական առած-ասացվածքներին է նա տողատակում մասալա անվանում, սպա՝ բացատրում՝ խրատ, հետո փակագծում գրում է (կամ՝ անեկդոտներ)⁴¹, մեկ այլ տեղ (1671) գրում է մասալներ (Առածներ):

³³ Գ. Սրվանձտյանց. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 274:

³⁴ Ս. Խորենացի. Պատմություն հայոց, թարգմ., ներ. և ծանոթ. ակադեմիկոս Ստ. Մայիսայանցի, Երևան, 1968, էջ 123:

³⁵ Ս. Աբեղյան. Երկեր, հ. 7, Երևան, 1970, էջ 184:

³⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269:

³⁷ Նույն տեղում, էջ 0269–0272:

³⁸ Նույն տեղում, էջ 0269:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Ս. Հայկունի. Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907:

⁴¹ ԳԱԹ. Ս. Հայկունու ֆոնդ, հ. 5 (1651–1653):

Հր. Աճառյանի «Պոլսահայ անգիր բանահյուսություն»⁴² գրքի «Առակներ» բաժնում ընդգրկված 55 նմուշներից 31-ն են անեկդոտներ՝ ժողովրդական երգիծապատումներ և զվարճախոսություններ, մնացածը բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ են՝ հեքիաթ, ավանդազրույց, առակ, առակային խորք ունեցող երկխոսական առած-ասացվածք և այլն:

Նոր Նախիջանի բառ ու բանն ընդգրկող Խ. Փոքրջեյանի գրքում⁴³ խառնված են հեքիաթ, առակ, ավանդազրույց, երգիծական մանրապատում, զվարճախոսություն և այլ եզրույթները՝ դրանք ներկայացնելով ընդհանուր առակներ խորագրի ներքո: Բանահավաքներից մեկն էլ ծանոթագրության մեջ մանրապատում-զվարճախոսություններին տվել է նաև «առակների» մեկ այլ՝ մասալ օտարալեզու անվանումը⁴⁴:

Լեզվաբան Պ. Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներում», առանց որոշակի տարանջատման, երկխոսական առակ-առածները ներկայացված են որպես համառոտ առակներ, անեկդոտներ և մանրապատումներ⁴⁵, ինչը, մեր կարծիքով, սխալ է: Եթե բերված օրինակներն ինչ-որ չափով առակային խորք ունեն, քանզի դրանք, հիմնականում պոկվելով առակներից և որոշ հեքիաթներից, շարունակել են կենցաղավարել իբրև խոհափիլիսոփայական-բարոյախրատական այլաբանական երկխոսություններ, ապա կապ չունեն անեկդոտների կամ մանրապատումների հետ: Մեջբերված օրինակներում բացակայում է վերջիններիս հատուկ անսպասելի ծիծաղ հարուցող նովելային վերջաբանը՝ առանց խոհափիլիսոփայական ուղղվածության:

Երբեմն սրախոսությունը և սրամտությունը նույնացվում է զվարճապատումի կամ զվարճախոսության հետ: Ս. Ավագյանի «Արձակ» գրքում սրախոսությունը և սրամտությունը խառնված են զվարճապատումի հետ: Այսպես, «Սրամտություն և սրախոսություն» բաժնի⁴⁶ 9 նմուշներից 7-ը զվարճապատում է, 2-ը՝ սրախոսություն⁴⁷, իսկ «Երգիծական գրույցներ» բաժնում ընդգրկված է և՛ հեքիաթը⁴⁸, և՛ զվարճապատումը⁴⁹:

Պետք է նկատել նաև, որ ինչ-որ տեղ դյուրին չէ զվարճախոսությունը սրամտություն-սրախոսությունից տարանջատելը: Խոսքը կարող է սրամիտ լինել, բայց ծիծաղ

⁴² Հր. Աճառյան. Պոլսահայ անգիր բանահյուսություն, Երևան, 2009:

⁴³ Խ. Ս. Փոքրջեյան. Նոր Նախիջանի հայ ժողովրդական բանահյուսությունը. - Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 2, Երևան, 1971, էջ 78:

⁴⁴ Նույն տեղում, էջ 85:

⁴⁵ Պ. Ս. Պողոսյան. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ (խոսքի տեսություն), գիրք երկրորդ, Երևան, 1991, էջ 205:

⁴⁶ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 125-131:

⁴⁷ Նույն տեղում, էջ 126, 128:

⁴⁸ Նույն տեղում, էջ 123 («Տել-Ֆանդ իմցող կրնիկ»), էջ 125 («Անխունար աղչրկան բախտ»):

⁴⁹ Նույն տեղում, էջ 122-123 («Քավրոչ շուն խոռվեր ի»):

չառաջացնել կամ, եթե ինչ-որ տեղ ծիծաղելի էլ լինի, անսպասելի չլինել: Այդ դեպքում գործ կունենանք սրախոտություն-սրամտության հետ:

Փաստենք նաև, որ ռուս բանագիտության մեջ ևս մինչև վերջերս ժանրային այդ տարբերակումը հստակեցված չի եղել: Այսպես, ռուս բանագետներ Է. Պոմերանցևան և Վ. Պրոպան անեկդոտը ընդգրկում են հեքիաթների մեջ. Պոմերանցևան՝ երգիծական հեքիաթների⁵⁰, իսկ Պրոպան, հեքիաթներն առանձնացնելով ըստ կերպարների, անեկդոտը դասում է կենդանիների և մարդկանց մասին հեքիաթների շարքում⁵¹: Նա մարդկանց մասին պատումների մեջ ներառել է և՛ «ռեալիստական կենցաղային կամ նովելային» հեքիաթները, և՛ անեկդոտներն ու ստահող պատմությունները (небылицы):

Մինչև XX դ. 20-ականները լատիշ բանագետները ևս անեկդոտն անվանել են երգիծական հեքիաթ կամ գրույց⁵²: Ընդ որում, դեռևս 1929–1930 թթ. Պ. Բիրկերտի շնորհիվ չորս ծավալուն հատորներով հրատարակվում են լատիշական անեկդոտները⁵³:

XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ ժողովրդական տարատեսակ անվանումներին զուգահեռ՝ թե՛ ժողովրդի մեջ, թե՛ գիտական շրջանակներում և հավաքչական ու հրատարակչական աշխատանքներում շրջանառության մեջ մտավ նաև օտարալեզու «անեկդոտ» եզրույթը: Ոչ միայն գրի առած նյութերը⁵⁴, այլև հրատարակվող ժողովածուները⁵⁵ սկսվեցին անվանվել նաև անեկդոտներ՝ ընկալելի դարձնելով փոքր կառուցվածք ունեցող ժողովրդական երգիծական ստեղծագործությունները:

Ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի»՝ անեկդոտը (anecdote) հունարեն, ֆրանսերեն բառ է՝ ռուսերենից հայերենին անցած, և նշանակում է՝ «1. Փոքրիկ բնորոշ պատմություն իրական դեպքերի...: 2. Փոքրիկ պատմուհի երևակայական կամ իրական անցքի՝ սրամիտ, ծիծաղաշարժ կամ ցուփ բովանդակությամբ...: 3. Շինույլի՝ երևակայական պատմուհի»⁵⁶:

⁵⁰ Э. В. Померанцева. Русская народная сказка. М., 1963, с. 87–103.

⁵¹ В. Я. Пропп. Жанровый состав русского фольклора. – Фольклор и действительность. М., 1976, с. 47–50.

⁵² Латышские народные анекдоты. Сост. К. Арайс, пер. Г. Горского. Рига, 1963, с. 9.

⁵³ Նույն տեղում, էջ 10:

⁵⁴ «Նոր Դար» (Թիֆլիս), 22. VIII. 1887, Հոկտեմբեր. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1994, էջ 583: Մանրամասն տե՛ս Ա. Շ. Սարգսյանի «Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոտությունների թումանյանական գրառումները և դրանց տարբերակային դրսևորումները» հոդվածում [«Էջմիածին», Ժ (հոկտեմբեր), 2015, էջ 98–111]:

⁵⁵ Անեկդոտներ, հ. 1, աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, 1876, Անեկդոտներ, գուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, 1878, Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս. Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, 1892 և այլն:

⁵⁶ Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 110:

Է. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանում» էլ անեկդոտը ներկայացված է որպես հունարեն բառ (*anekdotos*) և նշանակում է անտիպ: Այն զվարճալի բովանդակությամբ ոչ մեծ պատմություն է. «Անեկդոտները հիմնականում անանուն ստեղծագործություններ են և տարածվում են մեծ մասամբ բանավոր ձևով... Անեկդոտը աչքի է ընկնում իր սուր երգիծական բովանդակությամբ, անսպասելի ավարտով»⁵⁷:

Թե՛ Մտ. Մալխասյանցի, թե՛ Է. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի բառարաններում շեշտվում են տեսակի «ոչ մեծ» ծավալը, վիպական՝ պատմողական ժանրին պատկանելը և զվարճալի բնույթը՝ բովանդակությունը: Ի տարբերություն առաջինի, երկրորդում նշվում է նաև անեկդոտի ամենակարևոր հատկանիշը՝ անսպասելի ավարտը: Մակայն երկու բառարանների հեղինակներն էլ չեն խոսում անսպասելի կառուցվածքով անսպասելի խոսքով ավարտվող զվարճախոսությունների մասին:

Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» анекдот-ը թարգմանված է՝ անեկդոտ, զվարճապատում, զավեշտաք⁵⁸, որտեղ պատում և ասք եզրույթները կրկին վերաբերում են որոշակի սյուժե ունեցող ստեղծագործություններին:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» անեկդոտը ներկայացվում է որպես «Ոչ մեծ պատմություն՝ սրամիտ և զվարճալի դեպքի մասին»⁵⁹: Հեղինակները չեն մատնանշում այս տեսակի ամենաէական հատկանիշներից մեկը՝ պատումի, դեպքի անսպասելի ավարտը: Այստեղ ևս մատնանշված չէ անսպասելի անեկդոտի տեսակը՝ երկխոսական, մենախոսական, բաժակաճառային, լոզունգային զվարճախոսությունը:

Իր «Բանագիտական ակնարկներ» գրքում վաստակաշատ բանագետ Ս. Հարությունյանը օգտագործում է անեկդոտ եզրույթը՝ գրելով. «Բառը ունի հունարեն ծագում՝ անեկդոտոս, և նշանակում է «չհրատարակված, չտպագրված» իմ սուտը, և ինչոր ձևով ակնարկ կա արդի լեզուներում (ռուսերեն, հայերեն) անեկդոտների որոշ տեսակներին տրվող „бесцензурный“, – անցենզուր արտահայտությունը, այսինքն՝ հրապարակման կամ տպագրման ենթակա չէ իր բամբասակ բնավորության պատճառով»⁶⁰: Բացի ստուգաբանական նշանակությունից, Ս. Հարությունյանը տալիս է նաև այդ տեսակի մի քանի բնութագրումներ՝ հնարանք, հորինվածք, սեղմ զավեշտական պատում, պատմվածք⁶¹:

⁵⁷ Է. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի. Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 16:

⁵⁸ Ա. Ղարիբյանի. Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 12:

⁵⁹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 88:

⁶⁰ Ս. Հարությունյանի. Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 173–174:

⁶¹ Նույն տեղում:

Բուհերի ուսանողների համար նախատեսված «Հայ ժողովրդական բանահյուսություն» ձեռնարկում⁶² և քրեստոմատիայում⁶³, բանագետ Գր. Գրիգորյանը ևս, օգտագործելով անեկդոտ եզրույթը, նշում է հորինվածքի միայն սյուժետային-պատմողական բնույթը. «Անեկդոտները, ի տարբերություն պատմողական ժանրի մյուս ստեղծագործությունների և առանձնապես հեքիաթների՝ սեղմ ու լակոնիկ ձևով պատմում են միայն մի միջադեպ...»⁶⁴:

Միրիահայ բանագետ-ագագրագետ Հ. Չոլաքյանն իր գրառած մանրապատմողվարձախոսությունների գիրքն անվանում է «Միջգալատական անեքթոտներ»⁶⁵՝ վերահրատարակված գրքի դարձերեսին օգտագործելով նաև երգիծական մանրապատմաներ եզրույթը: Նա այսպես է բնութագրում ժողովրդական երգիծանքի այդ տեսակը. «Անեքթոտը ծիծաղաշարժ ու զուարճալի պատմություն մըն է, պատմողական սեռի ամենէն կարճ տեսակներէն մէկը: Միջադեպը կը պատմուի չափազանց սեղմ ու կարճաճոտ, պարզ, գրեթէ առանց որեւէ յարդարանքի: Ընդամենը քանի մը գործողություն է և քանի մը տիպոկ կը կազմեն անեքթոտը»⁶⁶: Չոլաքյանն այստեղ խոսում է նաև այնպիսի անեկդոտների մասին, որոնք «կազմուած են կարճ արտայայտութենէ մը, վերադիրէ մը կամ փոխաբերութենէ մը»⁶⁷: Ի դեպ, գրքի «Ընդհանուր բնութագրումներ» բաժնում տեղ գտած որոշ տեղավայրերի բնակիչներին տրվող ծաղրական բնորոշումների մի քանի նմուշներ⁶⁸ կապ չունեն անեկդոտի հետ:

Հարկ է նշել նաև, որ սկսած XIX դ. երկրորդ կեսից մինչև մեր օրերը հրատարակված անեկդոտների ժողովածուներում օտարալեզու անեկդոտ եզրույթն իր մեջ ներառում է ոչ միայն սյուժետով, այլև անսյուժե նմուշներ ընդգրկող տեսակներ: Անեկդոտներ եզրույթով հայտնի անսյուժե երկխոսական ստեղծագործությունների խոսուն վկայությունը ԽՍՀՄ հանրապետություններում և աշխարհում մեծ տարածում գտած «Հայկական ռադիոյի» անեկդոտաշարն է:

Վերջին շրջանում գիտական շրջանակներում անեկդոտի փոխարեն սկսվել է գործածվել ժողովրդական երգիծական մանրապատմող եզրույթը՝ շեշտելով ժողովրդականը՝ հեղինակային նմանատիպ ստեղծագործություններից տարանջատելու համար:

⁶² Գր. Գրիգորյան. Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980, էջ 300:

⁶³ Հայ բանահյուսություն, Քրեստոմատիա, կազմեց և խմբագրեց՝ Գր. Գրիգորյան, Երևան, 1974, էջ 320:

⁶⁴ Գր. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 320:

⁶⁵ Միջ-գալատական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յ. Չոլաքեան, Հալէպ, 1988: Գիրքը՝ որոշ վերադասավորություններով, ավելացված նոր նյութերով տե՛ս Յ. Չոլաքեան. Միջգալատական անեքթոտներ, Բ տպագրութիւն, Հալէպ, 2005:

⁶⁶ Յ. Չոլաքեան. նշվ. աշխ., էջ 6:

⁶⁷ Նույն տեղում, էջ 7:

⁶⁸ Նույն տեղում, էջ 167, 170, 174, 175, 272:

Աշխարհի տարբեր ժողովուրդների բանահյուսությունից քաղած և լեհերենից ռուսերենի վերածած Ն. Լարկովսկու գիրքը⁶⁹ հայերեն թարգմանվել է «Երգիծական մանրապատումներ»⁷⁰ վերնագրով: Առաջաբանի հեղինակ Գ. Գուլիան տալիս է նաև ժանրի բնութագիրը. «Ի՞նչ բան է երգիծական մանրապատումը: Այդ անվանումը ես կասեի, որ ավելի շատ գիտական է: Իսկ ավելի պարզ ասած, դա կոչվում է անեկդոտ: Իսկ անեկդոտները, ըստ վաղուց ի վեր հաստատված ավանդույթի, գրականության հետ կապ չունեն: Նրանք բանավոր ստեղծագործություններ են: Իսկ եթե անեկդոտը տպագրված է: Այդ դեպքում նա դառնում է երգիծական մանրապատում»⁷¹: Ի դեպ, Գ. Գուլիան անտեսում է անեկդոտի տեսակներից մեկի՝ զվարճախոսության կառուցվածքային՝ որոշակի սյուժե չունենալու հատկանիշը. «Երգիծական մանրապատումներ» գրքի 275–306 էջերի «Ռեպլիկներ» բաժնում ընդգրկված բոլոր 119 նմուշները երկխոսական բնույթի անսյուժե, կարճառոտ ստեղծագործություններ են՝ զվարճախոսություններ:

Վ. Սարոյանը 1960 թ. Հայաստան այցելության ժամանակ իր բանավոր խոսքում հաճախ է անեկդոտ եզրույթի հետ օգտագործում նաև կատակախոսությունը: Բանահյուսության որոշ տեսակների հանդեպ Սարոյանի ունեցած առանձնակի վերաբերմունքի մասին ահա թե ինչ է արձանագրել անվանի բանագետ Ս. Հարությունյանն իր սարոյանական հուշապատումում. «Ինձի հետաքրքիր է ֆոլկլորի փոքր տեսակներ՝ առակներ, հանելիքներ (իմա՝ հանելուկ – Ա. Ս.), կատակախոսություններ, պզտիկ զրույցներ, երգեր: Ես ստոնք շատ կսիրեմ: Ատոնց մեջ կերևա ժողովրդի հոգին, մտածողություն, հումոր. պզտիկ տեսակներուն մեջ ավելի մեծ իմաստություն կա»⁷²:

«Քսաներեք Նասրեդին» գրքի հայերեն թարգմանության առաջաբանում երգիծական մանրապատումներ եզրույթն է օգտագործում նաև վաստակաշատ բանագետ Ա. Ղանալանյանը. «Արևելյան մի շարք ժողովուրդներ (Մերձավոր և Միջին Արևելք, Միջին Ասիա և Կովկաս, Արևելյան Եվրոպա և այլն) իրենց բանավոր բանարվեստում ունեն կես-իրական, կես-ստեղծական մի կերպար (Խոջա Նասրեդին, Մոլլա Նասրեդին, Նասրեդին Աֆանդի, Նասր Էդին, Անաստրատին կոչեցյալ): Վերջինիս դարեր շարունակ վերագրվել են ժողովրդական անեկդոտներ հիշեցնող բազմաթիվ երգիծական մանրապատումներ...»⁷³: Այստեղ, հավանաբար, վրիպակ է թույլ տրվել, քանզի անեկդոտի հետ ժողովրդականը համահունչ չէ. հեղինակային անեկդոտ չկա,

⁶⁹ Микроюморески со всего света. Сост. Н. Лабковски. М., 1969.

⁷⁰ Երգիծական մանրապատումներ, թարգմանիչ՝ Մ. Հ. Դավթյան, Երևան, 1977:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Ս. Հարությունյան. նշվ. հոդվ., էջ 83:

⁷³ Քսաներեք Նասրեդին (առաջ. Ա. Ղանալանյանի). Խոջա Նասրեդինը և նրան վերագրվող երգիծական մանրապատումները, Երևան, 1986, էջ 3:

իսկ երգիծական մանրապատումը կարող է լինել թե՛ հեղինակային, թե՛ ժողովրդական:

Տեղեկացնենք նաև, որ Ա. Ղանալանյանը «Ավանդապատումի», «Առածանիի» պես ծրագրել էր հրատարակել նաև «Երգիծանի» ժողովածու՝ առաջաբան-ուսումնասիրությամբ հանդերձ: Այն ընդգրկելու էր ժողովրդական բանահյուսության բոլոր երգիծական տեսակները՝ երգիծական հեքիաթ, երգիծական առակ, երգիծական առած-ասացվածք, երգիծական երգ և այլն: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) արխիվի Ա. Ղանալանյանի ֆոնդում պահպանվող նյութերի մեջ կա ի մի բերված, դասդասված և գրեթե հրատարակության պատրաստ անեկդոտների մի փունջ⁷⁴: Ա. Ղանալանյանը 1973 թ. «Երգիծանին» պատրաստելիս տեսական բաժնում խոսում է նաև արևմտահայերի կողմից օտարալեզու անեկդոտ-ի հայերեն թարգմանության խնդուկ եզրույթի մասին. «Խնդուկ մը ըսեմ, լսե»⁷⁵:

Ն. Բախտիկյանը (հետագայում՝ արքեպիսկոպոս) «Շեփկայ խելացին»⁷⁶ գրքի երգիծական մանրապատումներն անվանում է զուարճախօսություններ, այնուհետև «Երկու խօսք»-ում «յուրահատուկ մտածելակերպ» ունեցող շեփկացիների այդ նյութերը կոչում է նաև մանրավեպեր՝ գրելով. «Մենք այս ինքնատիպ գյուղացիներուն մասին բաւական թուով մանրավեպեր հաւաքեր ենք, որոնք, անկասկած, ժամանակի ընթացքին հիւսուէր, որդուց որդի պատմուելով, մեզի հասեր են...»⁷⁷: Արևմտահայերենում մանրավեպ եզրույթը նշանակում է նաև զվարճալի պատմություն⁷⁸: Բախտիկյանը երգիծական պատկերման ձևերից մեկը՝ հումորը, սխալմամբ սեռ է անվանում, ավելացնելով՝ «...գրական այս սեռը, Հիւմորը իր արտայայտութեան խորքով, անմշակ սեռ մըն է մեր մեջ: Մեր այս երկը թող ճիգ մը նկատուի այդ ուղղութեամբ»⁷⁹:

Իսկ փերիահայերի երգիծական մանրապատումների գիրքը բանահավաքչության նվիրյալ հոգևորական Բախտիկյանն անվանել է «Փերիոյ խելացին»⁸⁰, իսկ նմանատիպ պոլիթեով պատումները՝ Զուարճալի մանրադեպեր, այսինքն՝ զվարճալի մանր՝ փոքրիկ դեպք-պատահումներ-պատմություններ: Նա ներկայացվող նյութերն անվանում է նաև «ժողովրդական գրոյցներ, զուարճախօսութիւններ-անէքթոտներ», որոնք

⁷⁴ Տե՛ս ՀԱԻ-ի արխիվ, Ա. Ղանալանյանի ֆոնդ (անտիպ նյութեր), թղթ. 2:

⁷⁵ Նույն տեղում, թղթ. 2-ա, էջ 39:

⁷⁶ Ն. Բախտիկյան. Շեփկայ խելացին (Հայկական զուարճախօսություններ), Պէրրութ, 1953:

⁷⁷ Նույն տեղում, էջ 5:

⁷⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 479:

⁷⁹ Ն. Բախտիկյան. Շեփկայ խելացին (Հայկական զուարճախօսություններ), էջ 5:

⁸⁰ Ն. Բախտիկյան. Փերիոյ խելացին (Զուարճալի մանրադեպեր), Պէրրութ, 1967:

«...դարերու խորքէն կը հասնին մեզի եւ մեզի կը բերեն մեր ժողովուրդին, մասնաւորաբար «ռամիկ դասակարգին իւրայատուկ մտածելակերպը»⁸¹:

Երկու դեպքում էլ Բախտիկյանի օգտագործած զուարճախօսութիւն եզրույթը ճիշտ չէ, քանզի դրանք ոչ թէ զվարճանք առաջացնող խոսքեր են, այլ՝ պակասատաց (կաճեցողներին տված Գ. Սրվանձտյանցի բնորոշումն է) թեմայով որոշակի այուժե ունեցող երգիծական մանրապատումներ՝ մանրավէպեր, մանրադէպեր-անէքթոսներ:

Ի վերջո, որո՞նք են անեկդոտի՝ ժողովրդական երգիծական մանրապատումի և զվարճախոսության ամենաբնորոշ հատկանիշները:

Ժողովրդական բանահյուսության երգիծական ստեղծագործությունների (երգիծական հեքիաթ, երգիծական առած-ասացվածք, երգիծական հանելուկ, երգիծական երգ, խաղիկ և այլն) համատեքստում ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճապատումն առանձնանում է տեսակային հատկանիշը բնորոշող հետևյալ կողմերով՝

1. պատումային անսպասելի զավեշտալի վերջաբանը,

2. ժողովրդական երգիծական մանրապատում եզրույթում ժողովրդականը՝ ժողովրդական երգիծապատում, ժողովրդական զվարճապատում, ժողովրդական զվարճախոսություն և այլն, շեշտելը (քանզի առկա են նաև դրանց հեղինակային դրսևորումները),

3. ժողովրդական երգիծական մանրապատումում և՛ տեսակի բնույթը (երգիծական), և՛ կառուցվածք-ծավալը (մանր, փոքրածավալ՝ կարճառոտ), և՛ ժողովրդական ստեղծագործության արձակ շարադրանքը (պատում - պատմություն) մատնանշելը:

Սակայն այս անվանումը ևս ամբողջությամբ չի ներառում, չի արտացոլում անեկդոտի տեսակային հատկանիշը: Վերը թվարկած կետերը վերաբերում են որոշակի այուժե ունեցող ստեղծագործություններին, քանզի պատում-ը, ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (բացի պատելը-ծածկել, քսել՝ արծնապատել, երեսապատել և պատվելը-պատիվ տալ իմաստից)՝ նշանակում է՝ բանավոր կամ գրավոր պատմություն, ասք, զրույց⁸², այսինքն՝ որոշակի այուժե ունեցող պատում-պատմություն:

Իսկ ո՞ր տեսակի մեջ մտնել անսպասելի ծիծաղ առաջացնող անպատում՝ անսյուժե մենախոսական, երկխոսական, նամակային, բաժակաճառային, անեծքա-օրհնանքային, հանելուկային, թարգմանական, ցուցանակային, գովազդային և այլ կառույցներով ու մանկական խոսքի զավեշտալի դրսևորումներով ստեղծագործությունները: Սրանք սրախոսություններ չեն, քանզի սրախոսությունը, ինչպես վերևում

⁸¹ Նույն տեղում, էջ 10–11:

⁸² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1980, էջ 184:

նշվեց, սուր խոսքն է, որը կարող է նաև անսպասելի ծիծաղ չառաջացնել: Ի տարբերություն սրախոսություն-սրամտության՝ վերը թվարկած խոսքի կառույցներում առկա են անսպասելի ծիծաղ հարուցող աներևակայելի, երբեմն էլ անհեթեթ մեկնաբանություն-հիմնավորումները: Եվ քանի որ նմանատիպ ստեղծագործությունների հիմնական հատկանիշն անսպասելի զվարճանք պատճառող կարճառոտ ամփոփ խոսքն է, դրանց մենք անվանել ենք ժողովրդական զվարճախոսություններ:

НАРОДНАЯ И НАУЧНАЯ ТЕРМИНОЛОГИЯ АРМЯНСКИХ АНЕКДОТОВ

АРМЕН Ш. САРКИСЯН

Резюме

Микроминиатюры и юмористические истории – анекдоты, являющиеся частью устного юмора, в разных регионах среди армян имели различные обозначения: *арак* (притча), *бет/бейт*, *гап/гяп*, *шух*, *шулук*, *һанак* (шутка), *пнкл-мнкл*, *масал* (веселая история), *зарапат/зарафат* и т. д. В научных и литературных кругах они также выступают под множеством названий: *араспел* (миф), *манрадел* (мелкий случай), *манравел* (мелкая история), *срахосутюн* (острое слово), *срамтутюн* (остроумие), народная юмористическая микроминиатюра, *зварчахосутюн* (забавное слово), анекдот (последний термин со второй половины XIX в. стал использоваться и в народе) и т. д. Народная юмористическая микроминиатюра выделяется следующими признаками:

1. неожиданная нарративная концовка;
2. народное происхождение, т. к. существует и авторское проявление юмористической микроминиатюры;
3. характерная особенность (юмористическая), объем (микро-, короткая) и прозаическая манера народного изложения (история, сказ). В отличие от острословия и остроумия, в бессюжетных монологических, диалогических, эпистолярных, застольных, имеющих структуру заклятий-благословений или загадок, детских выражений с проявлениями абсурдности присутствуют вызывающие неожиданный смех, невероятные, а иногда и бессмысленные обоснования-комментарии. И поскольку главной характеристикой подобных произведений является емкое короткое высказывание, вызывающее неожиданный смех (забаву), мы назвали их *зварчахосутюн* – «забавное слово».

FOLK AND SCIENTIFIC TERMINOLOGY
OF ARMENIAN ANECDOTES

ARMEN SH. SARGSYAN

Summary

Micro-miniatures and humorous stories – anecdotes, making a part of folk oral humour, were characterized by different terms in diverse regions among Armenians: *arak* (parable), *bet*, or *beyt*, *gap*, or *gyap*, *shukh*, *shulukh*, *hanak* (joke), *p'nkl-mungl*, *masal* (funny story), *zarapat*, or *zarafat*, etc. In scientific and literary circles they also were denoted by different titles, such as: *araspel* (myth), *manradep* (lesser event), *manravep* (lesser story), *srakhosutyun* (witty talk), *sramtutyun* (wittiness), folk humorous miniature, *zvarchakhosutyun* (comical talk), anecdote (the last term has been used also among people since the second part of 19th century), etc.

The folk humorous micro-miniatures can be characterized by the following traits:

1. Unexpected narrative ending.
2. Folkloric origin, for there are also original forms of humorous micro-miniatures (having authorship).
3. Characteristic indication (humorous), as well as size (micro-, short) and prosaic manner of expression (a story, a narration).

As opposite to wittiness and witty talk, in plotless monologic, dialogic, epistolary, tabled talks, having constructions of swear-blessings or riddles, children's expressions with traits of absurdity, there exist incredible and sometimes absurd explanations-commentaries that cause laugh. And since compositions of the sort are characteristic by short concluding expressions entailing unexpected joy, we prefer to indicate them as *zvarchakhosutyun* "comical talk".